

## Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

### Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների ընթացքի վերաբերյալ

Հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչությունը վերլուծել է 2019 թվականի հունվարի 9-ի «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված և շարժական կապի ծառայությունների հասանելիության վերաբերյալ տեղեկատվության հրապարակման և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N1Ն որոշման համաձայն՝ «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ների և «Յուբոմ» ՍՊԸ-ի կողմից իրենց ինտերնետային կայքերում մինչև 2019 թվականի մարտի 1-ը հրապարակված՝ 2019 թվականի առնվազն հունվարի 1-ի դրությամբ շարժական կապի ծածկույթների վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Վերլուծության ընթացքում հաշվի է առնվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, որի համաձայն՝ ՀՀ տարածքում առկա է 1003 բնակավայր (ներառված չէ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրը), որոնցից 32-ում բնակչություն առկա չէ, սակայն դրանցից 28-ում առկա է հանրային շարժական կապի ծածկույթ:

Հանրապետության բոլոր այն բնակավայրերում, որտեղ առկա է բնակչություն, ապահովված է առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի 2G և 3G տեխնոլոգիաների ծածկույթ, իսկ բնակավայրերի գերակշռող մասն ապահովված է նաև 4G և 4G+ տեխնոլոգիաների ծածկույթով: ՀՀ բնակավայրերում հանրային շարժական կապի ցանցի ծածկույթի վերաբերյալ աղյուսակը կցվում է:

Մասնավորապես, ստորև բերված է մանրամասն վերլուծություն ՀՀ բնակավայրերում (ներառյալ՝ բնակչություն չունեցող) 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրային շարժական կապի ծածկույթների ապահովվածության վերաբերյալ՝ ըստ տեխնոլոգիաների և օպերատորների քանակի.

- ՀՀ բնակավայրերի 4.6%-ը ապահովված է մեկ օպերատորի, 17.0%-ը՝ երկու օպերատորի և 78.0%-ը՝ երեք օպերատորի հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթով,
- ՀՀ բնակավայրերի 10.6%-ը ապահովված է մեկ օպերատորի, 35.1%-ը՝ երկու օպերատորի և 53.4%-ը՝ երեք օպերատորի հանրային շարժական կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով,
- ՀՀ բնակավայրերի 4.8%-ը ապահովված է մեկ օպերատորի, 1.9%-ը՝ երկու օպերատորի 4G տեխնոլոգիայի ծածկույթով,
- ՀՀ բնակավայրերի 88.0%-ը ապահովված է մեկ օպերատորի հանրային շարժական կապի 4G+ տեխնոլոգիայի ծածկույթով:

Միաժամանակ, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով ապահովված է եղել ՀՀ բնակավայրերի 88.5%-ը՝ 888 բնակավայր: Ընդ որում նշված 888 բնակավայրերն ամբողջությամբ ապահովված են եղել տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթով, իսկ 585 բնակավայր, կամ ՀՀ բնակավայրերի 58.3%-ը՝ 3G տեխնոլոգիայի ծածկույթով: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բնակավայրերի 11.5%-ը (115 բնակավայր) ապահովված չի եղել «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով: Սակայն 2018 թվականի հունվարի 1-ի համեմատ տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 4G տեխնոլոգիայի ծածկույթը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բնակավայրերի ընդգրկվածության առումով աճել է 1.3%-ով, որի արդյունքում նշված տեխնոլոգիայի ծածկույթով ապահովված քաղաքների և գյուղերի ընդհանուր թվաքանակը կազմել է 27:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով ապահովված են ՀՀ բնակավայրերի 99.3%-ը (996 բնակավայր): Ընդ որում նշված 996 բնակավայրերն ամբողջությամբ ապահովված են եղել տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթով, իսկ 984 բնակավայր կամ ՀՀ բնակավայրերի 98.1%-ը՝ 3G տեխնոլոգիայի ծածկույթով: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բնակավայրերի 0.7%-ը (7 բնակավայր) ապահովված չի եղել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով: Սակայն 2018 թվականի հունվարի 1-ի համեմատ տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 4G տեխնոլոգիայի

ծածկույթը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բնակավայրերի ընդգրկվածության առումով աճել է 3.8%-ով, որի արդյունքում նշված տեխնոլոգիայի ծածկույթով ապահովված քաղաքների և գյուղերի ընդհանուր թվաքանակը կազմել է 59:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Յուքոմ» ՍՊԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով ապահովված է եղել ՀՀ բնակավայրերի 92.2%-ը՝ 925 բնակավայր: Ընդ որում 850 բնակավայր, կամ ՀՀ բնակավայրերի 84.7%-ը ապահովված են տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթով, իսկ 849 բնակավայր, կամ ՀՀ բնակավայրերի 84.6%-ը՝ 3G տեխնոլոգիայի ծածկույթով: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բնակավայրերի 7.8%-ը (78 բնակավայր) ապահովված չի եղել «Յուքոմ» ՍՊԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով: Սակայն, 2018 թվականի հունվարի 1-ի համեմատ 15.6%-ով (156 բնակավայր) աճել է տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը և 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ տվյալ տեխնոլոգիայի ծածկույթով ապահովված է եղել 882 բնակավայր, կամ ՀՀ բնակավայրերի 88.0%-ը:

Ամփոփելով վերոնշյալը՝ պետք է արձանագրել, որ նախորդ տարվա (2018 թվականի հունվարի 1-ի) համեմատ 0.7%-ով ընդլայնվել է ՀՀ բնակավայրերում հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայով ծածկույթը, 2.0%-ով ընդլայնվել է ՀՀ բնակավայրերում հանրային շարժական կապի 3G տեխնոլոգիայով ծածկույթը և 15.6%-ով ընդլայնվել է ՀՀ բնակավայրերում հանրային շարժական կապի 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիայով ծածկույթը: Նկատի ունենալով, որ նույն ժամանակահատվածում հանրային շարժական կապի 4G տեխնոլոգիայով ծածկույթի աշխարհագրությունը ևս ընդլայնվել է՝ ընդգրկելով 39 նոր բնակավայր, պետք է նշել, որ հանրային շարժական կապի ընդհանուր ծածկույթը նախորդ տարվա (2018 թվականի հունվարի 1-ի) համեմատ, հանրապետության ամբողջ տարածքում արձանագրել է աճի դինամիկա առկա բոլոր չորս տեխնոլոգիաներով (2G, 3G, 4G և 4G+):

## ԱՂՅՈՒՍԱԿ

**2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի վերաբերյալ**

Մարզեր	Մեկ օպերատորի ծածկույթով ապահովված բնակավայրերի քանակը	Երկու օպերատորի ծածկույթով ապահովված բնակավայրերի քանակը	Երեք օպերատորի ծածկույթով ապահովված բնակավայրերի քանակը	Ծածկույթ չունեցող բնակավայրերի քանակը
Արագածոտնի մարզ	3	12	104	1
Արարատի մարզ	1	1	97	0
Արմավիրի մարզ	1	3	94	0
Գեղարքունիքի մարզ	2	13	81	1
Լոռու մարզ	8	20	102	0
Կոտայքի մարզ	1	6	62	0
Շիրակի մարզ	3	8	119	0
Սյունիքի մարզ	7	33	96	2
Վայոց Ձորի մարզ	9	9	37	0
Տավուշի մարզ	2	9	55	0
ք. Երևան	0	0	1	0
<b>Ընդամենը</b>	<b>37</b>	<b>114</b>	<b>848</b>	<b>4</b>
<b>Ընդամենը %</b>	<b>3.70%</b>	<b>11.40%</b>	<b>84.50%</b>	<b>0.40%</b>

\* Արժվաշեն բնակավայրը ներառված չէ

\* Հաշվարկված է 1003 բնակավայրով